ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 21-Ն

30/09/2021

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ , 76-րդ , 81-րդ հոդվածների , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով , ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 14.[1]-րդ , 43-րդ , 46-րդ հոդվածի գ. կետի և 46.2-րդ հոդվածի ա. կետի պահանջներով և հիմք ընդունելով Աստղաձոր համայնքի բնակիչներ Խաչիկ Երվանդի Ալեքսանյանի՝ ծնվ. 12.03.1995թ. , Արամ Երվանդի Ալեքսանյանի՝ ծնվ. 26.11.1996թ. և Երվանդ Պարգևի Ալեքսանյանի՝ ծնվ. 03.01.1970թ. դիմումները.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Աստղաձոր համայնքի ղեկավարի առաջարկությամբ , Աստղաձոր համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Գ. Նժդեհի փողոց 36 հասցեում գտնվող 05-013-0581-0008 կադաստրային ծածկագրով 0.01 հա մակերեսով բնակավայրերի , ընդհանուր օգտագործման տարածքից , ըստ ներկայացված էսքիզային հատակագծի առանձնացնել մոտ 4.0x5.0 մ չափսերի 20քմ մակերեսով 3 հատ տարածք , հասցեավորել համապատասխանաբար արևելքից-արևմուտք Գ. Նժդեհի փողոց 36/1 , Գ. Նժդեհի փողոց 36/2 , Գ. Նժդեհի փողոց 36/3 հասցեներով:

2. Վերոնշված հասցեավորվող գույքերը կառուցապատման իրավունքով , 90 տարի ժամկետով , առանց մրցույթի , յուրաքանչյուր հողի համար տարեկան 300 ՀՀ դրամ վճարի գումարով տրամադրել համապատասխաբնաբար Գ. Նժդեհի փողոց 36/1 հասցեի գույքը Խաչիկ Երվանդի Ալեքսանյանին , Գ. Նժդեհի փողոց 36/2 հասցեի գույքը Արամ Երվանդի Ալեքսանյանին , Գ. Նժդեհի փողոց 36/3 հասցեի գույքը Երվանդ Պարգևի Ալեքսանյանին , իրենց միջոցներով նշված տարածքներում ավտոկայանատեղի կառուցելու և հասարակության սպասարկման ծառայեցնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌԱՖԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**